

Գ. Ի. ՄԵՆՎԵԼԷՏԻ

Յունիսար 20-ին մեռաւ ռուս գիտնական Գմիսրի Իվանովիչ Մենդելէևը, որ ոչ միայն ռուսաց մէջ, այլ և արեմաքում էլ յայտնի էր ինչպէս մեծ քիմիկոս:

* Մնուած էր 1834-ին Տօրուսկում. նորա հայրը նոյն քաղաքի գիմնազիոնի տեսուչն էր և մեռաւ, երբ որդին հազիւ տասը տարեկան էր դառել: Նա իւր կրթութիւնը պարտական է մօրը, որ հանգուցեալի ասելով մեծ ազգեցութիւն է ունեցել նորա մտաւոր զարգացման վերայ: Մենդելէևը իւր բարձրագոյն կրթութիւնը ստացել է Պետերբուրգի Մանկավարժական ինստիտուտում, որ նորա քիմիայի ուսուցչն է եղել Վոսկրեսենսկին, բնագիտութեանը՝ Լենցը և մատիմատիկոսի՝ Ոստրոկրատսկին:

Ուսումը աւարտելուց յետոյ մի առ ժամանակ ուսուցչութեամբ է պարապել Սիմֆերոպոլում և Օդեսայում, բայց շուտով վերադարձել է Պետերբուրգ և պարապել է քիմիայով: Քիմիայի և բնագիտութեան մագիստրոսի քննութիւն տալուց յետոյ սկսում է դասախօսել Պետերբուրգի համալսարանում և ապա 1859 թ. ուղարկուում է արտասահման և 2 տարի մնում է Հայդելբերգում և հրատարակում է մի քանի մասնագիտական հետազօտութիւններ: 1861-ին՝ վերադառնում է Պետերբուրգ և դասախօսում է քիմիայի պրիւատ դոցենտի աստիճանով համալսարանում. 1863-ին նշանակուում է արուեստագիտական ինստիտուտում ուսուցչապետ, իսկ 1866-ին փոխադրուում նոյն ադաիճանով Պետերբուրգի համալսարանում: Այդ ժամանակներում նա հրատարակում է մի քանի շարադրութիւններ՝ արդիւնք հետազօտութեանց ջրի և ցքու միացման, նաւթի ուսումնասիրութեան (Բաքուում) և շն:

1868—70 լոյս է տեսնում նորա «Քիմիայի հիմունք»-ը որի մէջ ցոյց էր արուած քիմիական տարրերի պարբերական համակարգութեան սկզբունքը. յետոյ գազերի առաձգականութիւնը, նաւթի ածխածնածինը, ջրային բազազրութիւնները ըստ իւրեանց տեսակարար կշռի և լին:

Այս հետազօտութիւնները հռչակեցին Մենդելէևի անունը արեւմտքում և նրա նկարը հրատարակուեցան անգղիական «Scientific Worthie» անուանուած շարքի մէջ, միակ ռուս մարդը, որ ցարդ արժանացել է այդ պատուին:

Սակայն Մենդելէևը միայն իւր մասնագիտութեամբ չէ բաւականացել. նա հետաքրքրուել է կեանքի և գիտութեան ամէն տեսակ հարցերով:

Նա դրազուել է օղապարհիով, հետաքրքիր է եղել մեզի-
ումի երևոյթով: գրել իսպիրիտիզմի մասին, կազմել է գեղարուես-
տական հաւարածուններ, քայքայ առաւել դրազուել է ռուսաց
արդիւնաբերութեամբ: Նա ուսումնասիրել է նաւթի, քա-
րածուի և հանքային գործերը և այլն: 1890 դադարում է
համալսարանում դատախօսելուց և առևտրի ու մանուֆակտուրի
դեպարտամենտի խորհրդի անդամ դառնում և ջերմ պաշտ-
պան ռուս. արդիւնաբերութեան հովանաւորութեան սկզբուն-
քին: Դործակցել է զինուորական և ծախային նախարարութեանց
խորհրդին անձուխ վառողի ընտրութեան խնդրում:

1893 ին Դ. Ի. Մ. փողերանոցի նախարարութեան կից
«կչռի և չափի» պալատի գլխաւոր է նշանակուում և սկսում
հրատարակել «Временикъ»ը, ուր լոյս էին տեսնում նորա չա-
փաբերական հետազոտութիւնները: Իւր կեանքի վերջին տարի-
ներում առանձնապէս հետաքրքրուում էր Ռուսաց արդիւնա-
բերութեան և գիւղատնտեսական խնդրով. նա իւր հայեացք-
ները պարզել է «Завѣтныя мысли» և «Къ познанію Россіи»
հրատարակութեանց մէջ, վերջինս մի տարում (1906) 3 հրա-
տարակութիւն ունեցաւ: Այսպիսի անդուլ աշխատութեանց
մէջ էլ կնքեց նա իւր մահկանացուն 73 տարեկան հասակում
զեռ ընդունակ աշխատելու և պայծառ և ռողջ մտաւոր
կարողութեամբ:

Հասարակական խնդիրներում, կարելի էր շհամաձայնել
հանդուցեալի հետ, սակայն անկասկած Դ. Ի. Մենդելէեր
եռանդուն, անկեղծ և արտակարգ խելքի տէր մարդ էր, որ նա
խորը հետք թողեց թէ դիտութեան և թէ ռուսաց հասարա-
կական կեանքի վերայ:

